ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

« 24 » դեկտեմբերի 2021թ. № 434

## ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ազգանուշ Ֆրանգյանի զեկուցագիրը, Սպիտակ համայնքի նորընտիր ղեկավար Քաջայր Նիկողոսյանի երդման հանդիսավոր արարողությանը հյուրասիրություն կազմակերպելու համար՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի «Օրենսդիր և գործադիր մարմիններ» գործառական դասակարգման «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4237 հոդվածից հատկացնել 37 550 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

Համայնքի ղեկավար՝ ________________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 24
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«27» դեկտեմբերի 2021թ. № 435

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 23 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայկ Թովմասյանի 2021 թվականի դեկտեմբերի 16-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Սպիտակ համայնքի բնակիչ Հայկ Վալերիկի Թովմասյանի 2019թ. դեկտեմբերի 27-ին տրամադրված թիվ 23 շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգել 1 (մեկ) տարի:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Է.Թորոսյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ________________ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 27
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«27» դեկտեմբերի 2021թ. № 436

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 24 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ, հիմք ընդունելով «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ի 2021 թվականի դեկտեմբերի 24-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ին 2019թ. դեկտեմբերի 27-ին տրամադրված թիվ 24 շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգել 4 (չորս) ամսով:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Էդգար Թորոսյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 27
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«27» դեկտեմբերի 2021թ. № 437

## 06-006-0462-0020 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,055 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ և 58-րդ կետերով, հիմք ընդունելով Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի մայիսի 26-ի թիվ 84 որոշումը, Սպիտակ համայնքի ղեկավարի 2017 թվականի հուլիսի 4-ի թիվ 250 որոշումը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006IL69ZDB) և Աշոտ Հրաչի Սահակյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Աշոտ Հրաչի Սահակյանի սեփականություն ճանաչված՝ 06-006-0462-0020 կադաստրային ծածկագրով, 0,055 հա մակերեսով հողամասին տրամադրել «ք.Սպիտակ, Մուրացանի փողոց, թիվ 150» հասցեն (փոստային դասիչը՝ 1802):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________________ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 27
ք.Սպիտակ